ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

Հայաստանի քիմիական հանդես
Химический журнал Армении **76, № 1-2, 2023** Chemical Journal of Armenia

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

ԱՐԱ ԽԱԺԱԿԻ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

2022թ նոյեմբերի 26-ին 76 տարեկանում կյանքից հեռացավ ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ Օրգանական քիմիայի ինստիտուտի ազոտօրգանական միացությունների թ. 7 լաբորատորիա վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր Արա Խաժակի Գյուլնազարյանը: Արա Գյուլնազարյանը անցել է բեղուն և հարուստ գիտական ճանապարհ:

Նա ծնվել է 1946 թ. հայ ականավոր գրող, մանկագիր Խաժակ Գյուլնազարյանի և բանասեր, աղբյուրագետ Հասմիկ Սահակյանի ընտանիքում: Թեև մեծացել էր բանասերների և գրողների միջավայրում, սակայն որպես կյանքի ուղի երիտասարդ Արան ընտրեց միանգամայն այլ բնագավառ: 1964թ. ոսկե մեդալով ավարտելով դպրոցը ընդունվեց Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետ, որն էլ գերազանցությամբ ավարտեց 1969թ.՝ աշխատանքի անցնելով ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Օրգանական քիմիայի ինստիտուտում: ՕՔԻ-ն նրա համար դարձավ երկրորդ տուն, վկան լինելով գիտական վերելքների, հաղթահարված դժվարությունների և մաքառումների: Արա Գյուլնազարյանը 1974թ. պաշտպանել է «1,3-դիենների հենքի վրա ամինների և ամոնիումային միացությունների սինթեզը և դրանց փոխարկումները» թեմայով ատենախոսությունը ստանալով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1995-ից մինչ 1999 թ. աշխատել է «ՆԱԻՐԻՏ» ԳԱՄ-ում: 1997թ. Հաջողությամբ պաշտպանել է չհագեցած ամոնիումային միացությունների որոշ փոխարկումների բացահայտված օրինաչափություններին նվիրված ատենախոսությունը ստանալով քիմիական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Ա. Գյուլնազարյանի գիտական հետաքրքրությունների ոլորտը լայն էր և չէր սահմանափակվում

միայն ամինային միացություններով։ Մեծ է նրա ներդրումը կենսաբանորեն ակտիվ միացությունների սինթեզի, մշակման և ուսումնասիրման գործում։ Համագործակցելով Նովոսիբիրսկի բժշկական ինստիտուտի գիտնականների հետ հայտնաբերել և ուսումնասիրել է ամոնիումային աղերի հակավիրուսային հատկությունները։ Ա. Գյուլնազարյանը ստացել էր հակավիրուսային հատկություններ ցուցաբերող ամոնիումային աղերին նվիրված մի շարք հեղինակային վկայագրեր։ Արա Խաժակի Գյուլնազարյանը 1999-ից 2002թթ. եղել է ՕՔԻ գիտության գծով փոխտնօրեն, 2002-2003թթ. տնօրեն, 2008-2022թ.թ.՝ ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ գիտքարտուղար։ Շնորհիվ նրա կազմակերպչական եռանդի և բարձր մասնագիտական գիտելիքների կենտրոնի գիտական կյանքը սահուն էր և համակարգված։ Ա. Խ. Գյուլնազարյանը եղել է նաև Հայաստանի քիմիական ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, 2009թ. ընտրվել է Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ։ Բազմիցս պարգևատրվել է Գիտությունների ակադեմիայի պատվոգրերով և շնորհակալագրերով։ Ի լրումն այս ամենի, Արա Խաժակիչը, ինչպես սիրով դիմում էին նրան գործընկերներն ու նրան ճանաչողները, ուներ յուրօրինակ հիշողություն, լայն մտահորիզոն և գիտելիքներ քիմիայից զատ շատ ու շատ այլ ասպարեզներում։ Օժտված լինելով մարդկային բարձր արժանիքներով իր լավատեսությամբ, ազնվությամբ, սկզբունքներով, բոլորին անշահախնդիր հասնելու ցանկությամբ նա վայելում էր գիտական հանրության սերը և հարգանքը։ Այսպիսին նա կմնա իրեն ճանաչողների հիշողություններում։

ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի ԳՏԿ
ՀՀ ԳԱԱ ՕԴՔ ԳՏԿ Օրգանական քիմիայի ինստիտուտ
«Հայաստանի քիմիական հանդես»-ի խմբագրական խորհուրդ